

ՀՈՒՅՄ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

Գալղ թող լինի բարի, Նոր տարի 2016



شماره ۲۰۶ دی ماه ۱۳۹۴ No 206, December 2015 Գեկտեմբեր 2015 թ. # 206

Այս համարում

Հայերեն բաժին

1- Խմբագրական.....	0
2- Հայաստան.....	1
3- Արևմտյան Հայաստան.....	9
4- Միյուրք.....	13
5- Միջազգային.....	14
6- Հասարակական.....	14
7- Մշակույթ.....	15
8- Գծանկարչություն.....	15
9- Առածանի.....	15

Պարսկերեն բաժին

Հայ գրականություն և մշակույթ.....1-4

←—————→

Ճապիկի առաջին էջում՝ Գալո թող լինի բարի, Նոր տարի
Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրերը
 Համար 206, Դեկտեմբեր 2015 թ.
 No. 206, December 2015
 ماهنامه لویس - شماره ۲۰۶ دی ماه ۱۳۹۴

ԼՈՒՅՍ

Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝
Էդ. Բաղդասարյան
 Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան
 Թամ Ղարախանյան, Մաթենիկ Ավետիսյան
 Էմմա Բեգիչանյան, Հովիկ Վարդումյան,

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com
 Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS
Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատավաճառ - 5000 ռիալ
Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են
 չհամընկնել խմբագրության տեսակետներին:
 Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին
 պարտադիր է:

Նոր տարվա տոներ



Դեռևս հնագույն ժամանակներում մարդիկ նկատել էին տարվա եղանակների ցիկլային բնույթը: Մեր թվարկությունից առաջ II հազարամյակում շումերները օրացույց էին ստեղծել, որը 12 ամսից էր կազմված: Ամիսները սահմանված էին որպես լուսնի իրար հաջորդող նույնանման փուլերի միջև ընկած ժամանակահատված: Հին Չինաստանում մոտավորապես մթա VI դարում ճշտել էին արեւային տարվա տևողությունը՝ 365,25 օր:

Նոր տարուն անցումը նշանավորող տոնի ծննդի վերաբերյալ բազմաթիվ վարկածներ կան: Պատմական փաստաթղթերի համաձայն, մթա III հազարամյակում Միջագետքում արդեն տոնում էին Նոր տարին: Սակայն որոշ պատմաբաններ պնդում են, որ այդ տոնն ավելի հին է:

Մոտավորապես այնպես, ինչպես մենք ենք ներկայումս տոնում, նոր տարին տոնվում էր Հին Եգիպտոսում: Այն ժամանակ տոնում էին մեծն Նեդոս գետի սեպտեմբերյան վարարումը, ինչը կարելու իրադարձություն էր եւ նշանավորում էր ցանքի նոր սեզոնի սկիզբը: Այդ օրը (իսկ ավելի ճշգրիտ՝ գիշերը) երաժշտություն էր հնչում, պարեր էին կազմակերպվում, մարդիկ իրար նվերներ էին տալիս:

Հին Հայաստանում օրացույցը կազմված էր 12 ամսից, որոնցից յուրաքանչյուրը 30 օր ուներ, եւ 5 օրանոց մեկ լրացուցիչ ամսից: Որոշ տվյալների համաձայն, մեր նախնիները նոր տարվա միանգամից երեք տոն էին նշում՝ Ամանորը, Նավասարդը եւ հունվարի 1-ը: Հնագույն ժամանակներում հայերը նոր տարին տոնում էին մարտի 21-ին՝ գարնանային գիշերահավասարի օրը: Նավասարդը, որի արմատները հասնում են մինչև մ.թ.ա. մի քանի հազարամյակ, տոնվում էր օգոստոսի 11-ին: Իմիջիայլոց, Հայաստանում ներկայումս Նավասարդը տոնվում է որպես ազգային ինքնության օր:

Նոր տարվա սկիզբը տարբեր ժողովուրդների մոտ տոնում էին տարբեր ժամանակներում: Հուլիոս Կեսարի մտցրած նոր օրացույցում նման օր դարձավ հունվարի 1-ը (երկդիմի աստված Յանուսի անունով, որը խորհրդանշում էր անցյալը եւ ապագան: Այդ ժամանակվանից է գալիս տները զարդարելու ավանդույթը: Հռոմեական կայսրության անկումից հետո այդ սովորությունը տարածվեց նրա տարածքում ձեւավորված քրիստոնեական երկրների վրա: Սակայն ներկայիս Եվրոպայում (նաեւ՝ ԱՄՆ-ում, Կանադայում եւ մի շարք այլ երկրներում) այդ տոնն իր նշանակությամբ զիջում է Մուրբ ծննդին:

Խորհրդային իշխանությունը «կրոնի դեմ պայքարի» ժամանակաշրջանում Մուրբ ծնունդը որպես պաշտոնական տոն վերացրել էր: Դրան ի հակակշիռ, 1936-ին դեկրետ էր հրապարակվել, որը թույլ էր տալիս, հանրային, պաշտոնական եղանակով տոնել Նոր տարին: Եղեւնին եւս պաշտոնապես «ճանաչեցին», սակայն նրա վրա, ութթեւանի Բեթլեհեմյան աստղի փոխարեն, թույլ տրվեց կարմիր հնգաթեւ աստղ տեղադրել: ԽՍՀՄ-ի փլուզման հետ Մուրբ ծնունդը վերականգնեց իր իրավունքները մի շարք հետխորհրդային պետություններում: Սակայն իներցիայի բերումով Նոր տարին շատերի համար մնում է տարվա ամենաափրելի տոնը:

Հայաստան

Արտաքին քաղաքականությունը 2015-ին. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը, լարվածություն սահմաններին, ԵՄ-ի հետ բանակցություններ



Photo: www.president.am

Հայոց ցեղասպանության 100-րդ տարին արտաքին քաղաքական օրակարգի առաջին պլան բերեց ճանաչման ու դատապարտման հարցերը ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի տարբեր պետություններում և ուժի կենտրոններում, որոնք վերահաստատեցին իրենց դիրքորոշումը Օսմանյան կայսրությունում իրականացված հայերի զանգվածային սպանությունների և տեղահանությունների վերաբերյալ:

Ոգեկոչման բուն արարողությունները ապրիլի 24-ին տեղի ունեցան Հայաստանի և աշխարհասփյուռ հայերի քաղաքամայր Երևանում: Չորս երկրների ղեկավարները, այդ թվում՝ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը, ինչպես նաև Մերիլայի և Կիպրոսի նախագահները, ներկա էին Ծիծեռնակաբերդում կայացած ոգեկոչման հիմնական արարողություններին: Տարբեր երկրներից ժամանած բարձրաստիճան այլ պետական պաշտոնյաներ ու հյուրեր նույնպես մասնակցեցին երևանյան միջոցառումներին:

Տարվա ընթացքում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված զանազան միջոցառումներ տեղի ունեցան նաև աշխարհի տարբեր երկրներում:

Հիշարժան է ապրիլին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում Հռոմի Պապ Ֆրանցիսկոս Առաջինի Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին մատուցած պատարագը, որի ընթացքում Հռոմի արքայազան քահանայապետն անդրադարձել է Օսմանյան Թուրքիայում հայերի բնաջնջմանը՝ որպես «20-րդ դարի առաջին ցեղասպանության»:

Պատարագին մասնակցում էին նաև Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Հայ Առաքելական Եկեղեցու Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը, Մեծի Տանն Կիլիկիո Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարք Ներսես Պետրոս 19-րդը, այլ բարձրաստիճան այրեր Հայաստանից

և սփյուռքից:

Հատկանշական է նաև, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ ճանաչման ու դատապարտման հարցերը նաև հայտնվել են Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրության դաշնակիցներ Ավստրիայի, Գերմանիայի և Բուլղարիայի քաղաքական օրակարգերում:

Իսկ դեկտեմբերի 9-ին Հայաստանի նախաձեռնությամբ առաջին անգամ աշխարհում նշվեց Ցեղասպանության հանցագործության գոհերի հիշատակի, արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օրը: Այն Հայաստանի ջանքերի շնորհիվ պաշտոնապես ընդունվեց ՄԱԿ-ի միջազգային օրացույցում:

2015 թվականը չբերեց հանգստություն դարաբաղյան հակամարտության գոտում, որտեղ հրադադարի ռեժիմի խախտումներն ու դրանց հետևանքով մարդկային զոհերը ցավալի պարբերականությամբ շարունակվեցին ողջ տարվա ընթացքում: Հայաստանը նաև մեղադրեց Ադրբեջանին խաղաղ բնակչության դեմ ուղղված թիրախային կրակի համար այն բանից հետո, երբ սեպտեմբերին Հայաստանի սահմանամերձ համայնքներում երեք կին զոհվեց ադրբեջանական դիրքերից արձակած կրակոցներից:

1994 թվականից ի վեր առաջին անգամ Ադրբեջանը հակամարտության գոտում սկսել է լայնորեն կիրառել այնպիսի զենքեր, ինչպիսիք են ականանետներ, նռնականետներ, հատուրից հրանոթներ և այլ ծանր հրետանի հայկական դիրքերը ռմբակոծելու, իսկ երբեմն նաև բնակավայրերը ականակոծելու համար: Իսկ դեկտեմբերին մի քանի անգամ Ղարաբաղում հայկական դիրքերը ռմբակոծելու համար Ադրբեջանը նաև հրասայլ է օգտագործել:

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի, ռուս և ֆրանսիացի համանախագահները հիմնականում ձեռնպահ են մնացել կողմերի մեկին հստակ ու հրապարակային մեղադրելուց, նույնիսկ այն բանից հետո, երբ իրենք էլ հայտնվեցին կրակահերթերի տակ հոկտեմբերին շփման գծում դիտարկման ժամանակ: Փոխարենը, նրանք կոչ են արել Ադրբեջանին հետևել հայկական կողմի օրինակին ու համաձայնել խախտումների հետաքննության մեխանիզմների մշակմանը:

Բնական է, որ տարեվերջին միջնորդների կազմակերպած Հայաստանի և Ադրբեջանի նախագահների համադիպոմը պիտի ավելի շատ քննարկեր հակամարտության գոտում ընթացիկ լարվածությունը նվազեցնելու, քան բուն հակամարտության կարգավորմանն ուղղված կոնկրետ առաջարկների վերաբերող հարցերը:

Մինչդեռ, 2015 թվականի ընթացքում հայկական կողմը շարունակել է մտահոգություններ հնչեցնել իր դաշնակից Ռուսաստանի կողմից Ադրբեջանին հարձակողական զենքի և այլ ժամանակակից սպառազինության վաճառքի վերաբերյալ: Ըստ ռազմական փորձագետների, սակայն, Մոսկվան պահպանել է Երևանի և Բաքվի միջև ռազմական պարիտետը նաև այն բանի շնորհիվ, որ շարունակել է ժամանակակից տեսակի սպառազինությամբ զինել նաև Հայաստանին: Ռուսաստանը, ամենայն հավանականությամբ, կավելացնի իր ռազմական

ներկայությունը Հայաստանում անցնող տարվա ընթացքում Թուրքիայի հետ իր հարաբերությունների սրման պատճառով:

Հայաստանն ու Ռուսաստանը պայմանավորվել են ստեղծել միասնական հակաօդային պաշտպանության համակարգ, իսկ դեկտեմբերին ռուսական կողմը Երևանի մոտ գտնվող «Էրեբունի» ռազմական օդակայանում սկսել է տեղակայել նոր մարտական ուղղաթիռներ: Այն կավելացնի Հարավային Կովկասում Ռուսաստանի ռազմական ներկայությունը, որն արդեն ապահովված է Գյումրում տեղակայված ռուսական 102-րդ ռազմաբազայի տեսքով:

Ի դեպ, Հայաստանի հյուսիսարևմտյան այս քաղաքը ցնցվեց հունվարին այն բանից հետո, երբ ռազմաբազան ինքնակամ լքած ռուս զինծառայողը, ըստ քրեական գործի իրեն ներկայացված մեղադրանքի, գնդակահարել-սպանել է յոթ հոգանոց հայ ընտանիքը: 19-ամյա ժամկետային զինծառայող Վալերի Պեմյակովին մեղսագրվող այս զահրուրելի արարքը, որի հետևանքով զոհվել են նաև երկու մանկահասակ երեխաներ, բողոքի մեծ ալիք բարձրացրեց Գյումրում՝ մտահոգությունների տեղիք տալով Հայաստանով մեկ:

Փողոց դուրս եկած մարդիկ պահանջում էին, որ ենթադրյալ մարդասպանին ռուսական կողմը անհապաղ հանձնի հայ իրավասպահներին: Կային նաև որոշ մտահոգություններ հայ-ռուսական հարաբերություններում հնարավոր բարդությունների վերաբերյալ, սակայն հրեշավոր այդ սպանող ու դրան հաջորդած բողոքի ակցիաները չհանգեցրին Հայաստանում հակառուսական տրամադրությունների: Պեմյակովի հայկական դատարանի կողմից վարած դատավարությունը մեկնարկեց դեկտեմբերին:

Հակառուսական տրամադրությունները ակնհայտորեն բացակայել են նաև հունիս-հուլիս ամիսներին Երևանում տեղի ունեցած զանգվածային քաղաքացիական բողոքի ակցիաների ընթացքում, երբ մարդիկ, այդ թվում՝ մեծ թվով երիտասարդներ, դուրս եկան փողոց՝ ռուսական ընկերությունը պատկանող «Հայաստանի էլեկտրական ցանցերի» վարած սակագնային քաղաքականության դեմ:

Տարվա ընթացքում Հայաստանը նաև շարունակեց ուղիներ փնտրել նոր որակ հաղորդելու Եվրոպական միության հետ իր հարաբերություններին այն բանից հետո, երբ 2013 թվականին պաշտոնական Երևանի՝ Ռուսաստանի գլխավորած Մաքսային միությանը միանալու մասին որոշման պատճառով փաստորեն խափանվեց ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագրի նախատրագրման գործընթացը:

2015 թվականի դեկտեմբերին Երևանի և Բրյուսելի միջև մեկնարկեցին բանակցությունները նոր լայնածավալ շրջանակային համաձայնագրի վերաբերյալ, որը կկարգավորի Հայաստանի ու ԵՄ-ի միջև երկկողմ հարաբերությունները: Հայաստանը, սակայն, այնդում է, ու ԵՄ-ն թերևս հաշվի է նստում, որ հարաբերությունների նոր իրավական բազան չպետք է հակասի Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միության անդամակցության շրջանակներում ստանձնած պարտավորություններին: Ռուսաստանին, Բելառուսին, Ղազախստանին և Ղրղզստանին միավորող տնտեսական այս միությանը Հայաստանը միացել է 2015 թվականի հունվարի 2-ին:

Տնտեսությունը 2015-ին. Եվրասիական անդամակցություն, ԱՄՆ-Հայաստան առևտրի համաձայնագիր, Էներգահամակարգի վաճառք



Photo: www.president.am

2015-ին Հայաստանի տնտեսական կյանքում ամենանշանակալի իրադարձություններից մեկը հունվարի 2-ից Եվրասիական տնտեսական միությանն անդամակցել էր, ինչը դարձավ ընդդիմադիրների քննադատության հիմնական թիրախը, քանի որ միության գլխավոր շարժիչ ուժ Ռուսաստանի տնտեսության խնդիրների պատճառով Հայաստանը չկարողացավ արդարացնել Հայաստանի իշխանությունների դրական կանխատեսումներն ու սպասումները:

Նավթի գների անկման, ինչպես նաև Ռուսաստանի նկատմամբ Արևմուտքի պատժամիջոցներով պայմանավորված ռուսական տնտեսության խնդիրներն ուղղակիորեն անդրադարձան նաև Հայաստանի տնտեսության վրա:

պաշտոնական տվյալներով 2015 հունվար-հոկտեմբերին դեպի Ռուսաստան արտահանումը նվազեց 29,4 տոկոսով, այդ երկրից փոխանցվող տրանսֆերտները կրճատվեցին 38 տոկոսով:

Դրամական փոխանցումների նվազումը տարվա ողջ ընթացքում նաև հանգեցրեց Հայաստանում ներքին ապրանքաշրջանառության նվազմանը՝ առաջին 10 ամիսներին 6,4 տոկոսով, դառնալով նաև ներմուծման 26,6 տոկոսանոց անկման հիմնական պատճառը:

Արտահանման նվազումը վնաս էր վերամշակող ընկերությունների գործունեությանն ու գյուղատնտեսությանը, քանի որ գինի, կոնյակ ու վերամշակված պահածոներ արտադրողները Ռուսաստան արտահանումը կրճատեցին՝ պակասեցնելով նաև մթերվող մրգերի ու բանջարեղենի քանակը: Մա հանգեցրեց նրան, որ այս տարի առատ բերք ունեցած գյուղացիական բազմաթիվ տնտեսություններ չկարողացան վաճառել իրենց ողջ միրգն ու բանջարեղենը:

Այդուհանդերձ, գյուղատնտեսությունն աճ արձանագրեց՝ 2015-ի առաջին 10 ամիսներին անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 11,6 տոկոսով:

Թեպետ տարեսկզբին փորձագետներն ու միջազգային ֆինանսական կազմակերպությունները Հայաստանի տնտեսության համար կանխատեսում էին գրոյական կամ

անգամ բացասական ան, գյուղատնտեսության ու հանքարդյունաբերության ոլորտներում արձանագրված աճի շնորհիվ կառավարությունը կարողացել է ամանորին ընդառաջ տնտեսական դրական աճի դիրքերը կայունացնել. հունվար-հոկտեմբերին արդեն տնտեսական ակտիվությունը անցյալ տարվա նույն ժամանակամիջոցի նկատմամբ 3,5 տոկոսով ավելի է:

Մարտին Հայաստանի կառավարությունը տեղակայեց 500 մլն դոլար արժողությամբ երկրորդ թողարկման եվրապարտատոմսերը 7,5 տոկոս եկամտաբերությամբ: 10-ամյա պարտատոմսերը վաճառվեցին միջազգային ֆինանսական շուկաներում, թողարկման գլխավոր տեղաբաշխողներն էին` Deutsche Bank-ը, HSB C-ն և JP Morgan-ը: Վաշինգտոնում գործող «Փոլիսի ֆորում Արմենիա» (ՓՖԱ) կազմակերպությունը, որը հայ տնտեսագետներից, քաղաքագետներից, լրագրողներից, իրավաբաններից և այլ մասնագետներից բաղկացած խումբ է, Հայաստանի կառավարության կողմից եվրապարտատոմսերի վերջին թողարկումը գնահատեց «անպատասխանատու» և «երկրի համար վնասակար»:

Մայիսի սկզբին Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը և ԱՄՆ-ի առևտրի ներկայացուցչի տեղակալ Դանիել Մուլանը Վաշինգտոնում ստորագրեցին երկար տարիներ բանակցված Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև առևտրի և ներդրումների շրջանակային համաձայնագիրը (TIFA):

Գարնանը իշխանությունները չկարողացան մերժման պատշաճ հիմնավորում գտնել ու ամռան սկզբին հաստատեցին էլեկտրաէներգիայի սակագինը բարձրացնելու «Հայաստանի էլեկտրական ցանցերի» (ՀԷՑ) դիմումը, ինչը հասարակական լայն ընդվզում առաջացրեց՝ հունիսի վերջին ու հուլիսի սկզբին տասնյակ հազարավոր քաղաքացիներ դուրս եկան փողոց ու, փակելով Բաղրամյան պողոտան, պահանջեցին չեղյալ համարել որոշումն ու, անգամ, նվազեցնել այն ժամանակ գործող սակագինը:

«Էլեկտրիկ Երևան» անվանումն ստացած շարժումը, սակայն, չկարողացավ հասնել իր հայտարարած նպատակին, սակայն հաջողվեց հասնել էլեկտրաէներգիայի սակագների մասնակի սուբսիդավորմանը և Հայաստանի էներգետիկ համակարգում միջազգային աուդիտի անցկացմանը, որի արդյունքներով սակագնի բարձրացման հայտն արդարացված է:

Այդուհանդերձ, դրական տեղաշարժ արձանագրվեց, երբ աշնանը ռուսաստանաբնակ հայագի գործարար Սամվել Կարապետյանին պատկանող «Տաշիր գրուփը» գնեց ՀԷՑ-ը ու խոստացավ փոխհատուցել առավել անապահով ընտանիքների էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացված չափաբաժինը:

Հոկտեմբերին վերջնականապես կայացավ «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի» վաճառքի գործարքը, որ կնքվել էր դեռ անցյալ տարի: «Քոնյոնր գոբալ» ընկերությունը, որ ձեռք է բերել կասկադը 180 մլն ԱՄՆ դոլարով (90 մլն-ն արդեն վճարված է, մնացած մասը կվճարվի մինչև 2016-ի հունիսի 30-ը), խոստացավ առաջիկա 5 տարիներին 50 մլն դոլար ներդնել:

Տարեկարգին 2014-ի արժեզրկումից հետո էժանանալ շարունակվող հայկական դրամը 2015-ի ընթացքում կայունություն դրսևորեց, թեև թե՛ տնտեսական գործընկեր ԵՏՄ պետություններում, թե՛ ԱԿՀ շատ պետություններում ազգային արժույթները զգալիորեն արժեզրկվեցին: Տարեվերջին էլ դրամը կարճաժամկետ կտրվածքում դիմակայեց ԱՄՆ-ի վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացմանը հետևած այլքի նկատմամբ:

Հասարակությունը 2015 թվականին. «Էլեկտրականացված Երևանի» բողոքի ցույցեր, աջակցություն սահմանամերձ համայնքներին, կրթական բարեփոխումներ



Ֆոտոլուր

2015-ը թեև հասարակական ակտիվությամբ հագեցած տարի էր, սակայն ամենայն հավանականությամբ այն դեռ երկար տարիներ իր մասին կհիշեցնի այս տարում «բարձր լարմամբ» տեղի ունեցած նոր որակի պայքարներով:

Վերջին երկու տարիներին էլեկտրաէներգիայի արդեն երրորդ թանկացման որոշումը հազարավոր քաղաքացիների միավորելով՝ այս տարվա ամռանը փողոց դուրս բերեց և օրեր շարունակ նախ Երևանը, հետո նաև՝ ամբողջ երկիրը պահեց «Էլեկտրականացված» վիճակում:

Երևանի կենտրոնում՝ Բաղրամյան պողոտայում էլեկտրաէներգիայի սակագների բարձրացման դեմ պայքարող ակտիվիստների հետ գիշերային դիմակայությունից հետո հունիսի 23-ի վաղ առավոտյան Հայաստանի ոստիկանությունը ուժ և հատուկ միջոցներ կիրառեց, սակայն դա չկանգնեցրեց բողոքը, ավելին՝ հաջորդ օրերին պողոտան էլ ավելի մարդաշատ էր: Չքաղաքականացված այս ցույցերին մարդիկ գալիս էին ընտանյոք հանդերձ, փոքր երեխաներով, ջրով և սննդով: Իսկ ցուցարարների և ոստիկանության միջև Հայաստանում հայտնի հասարակական, քաղաքական ու արվեստի գործիչները կենդանի պատ էին կազմել՝ փորձելով այդ կերպ ապահովել երկու կողմերի անվտանգությունը:

Էլեկտրաէներգիայի թանկացման դեմ բողոքի դուրս եկած քաղաքացիական նախաձեռնության պայքարի դրական արդյունքը հաշվի առնելով՝ հանրային ծառայություններ մատուցող մեկ այլ ընկերություն հետ կանգնեց ջրամատակարարման և ջրահեռացման սակագինը բարձրացնելու մտադրությունից:

2014-ին ձևավորված «Դ՛ո՛րս մեր գրպանից» նախաձեռնությունը այս տարի ևս շարունակեց

պաշտպանել ավտովարորդների շահերն ու բարձրացնել նրանց հուզող հարցերը:

Ամիսներ տևած փողոցային պայքարի արդյունքում էլ օգոստոսին իրենց հաղթանակը տոնեցին «Նաիրիտի» աշխատակիցները, երբ վերջապես ստացան իրենց մի քանի ամսվա չվճարված աշխատավարձերը, սակայն Հայաստանի երբեմնի քիմիական հսկայի ճակատագիրը դեռևս շարունակում է մնալ անորոշ:

Այս տարի կառավարությունը մի շարք օրինագծերով հանդես եկավ՝ փորձելով որոշ չափով սատարել սպաներին, սահմանափակելով: Մի քանի անգամ տարբեր չափի գումարներ տրամադրվեցին աղբրեջանական գնդակոծություններից տուժած համայնքներին:

Վերջին տարիներին աղբրեջանական կողմի կրակահերթերի հետևանքով վնասվածքներ ստացած զինձառայողների՝ արտերկրում բուժում ստանալու հանգամանքն էլ հաշվի առնելով՝ մայիսին Հայաստանի Կառավարությունը հաստատեց արտերկրում վիրավոր զինձառայողների բուժման ֆինանսավորման օրինագիծը:

Հունիսին էլ Կառավարությունն առաջարկեց առաջնագծում մարտական հերթապահության ժամանակահատվածը կրկնակի չափով հաշվարկել, ինչը նշանակում է, որ հակառակորդի հետ շփման գծում զինվորական ծառայություն իրականացնող սպաներն ու ենթասպաներն ավելի բարձր թոշակ կստանան:

Ազգային ժողովն էլ որոշեց ներկայիս 9-ամյա պարտադիր կրթությունը դարձնել 12-ամյա:

Այրի-սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում սննդային թունավորումների և աղիքային վարակի դեպքերի աննախադեպ ան գրանցվեց, մասնավորապես, զանգվածային թունավորումներ գրանցվեցին Արմավիրի մարզի 2 մանկապարտեզում, երբ հոսպիտալացվեց ավելի քան մեկ տասնյակ երեխա, Արարատի մարզի Բաղրամյան և Այգեգարդ գյուղերում, երբ դպրոցներից «սննդային թունավորում» ախտորոշմամբ հիվանդանոց ընդունվեց 48 երեխա, և Արագածոտնի մարզի 9 համայնքում՝ 25 երեխայի հոսպիտալացմամբ:

Հիմնականում վարակի աղբյուր են հանդիսացել անորակ սնունդը և հակասանիտարական վիճակը:

Այս տարին մտահոգիչ էր նաև զազալցակայաններում տեղի ունեցած պայթյուններով, որոնց հետևանքով 3 քաղաքացի է զոհվել: Երևանի և մարզերի մի քանի զազալցակայաններում գրանցված պայթյունները պատճառաբանվեցին անսարք և անորակ զազալցալոններով:

Տարվա ողբերգական լրահոսի մեջ առանձնացավ Ռուսաստանի Տուլա քաղաքի մերձակայքում ավտորուսի խոշոր վթարը, որի ընթացքում Հայաստանի 9 քաղաքացի զոհվեց, տասնյակ մարդիկ վնասվածքներ ստացան:

Այս տարվա մարտին երևանյան բազմաթիվ սուպերմարքեթների կողքին ավելացավ նաև երկար սպասված ֆրանսիական բրենդային «Վարֆուր» սուպերմարքեթը, որի բացումը բազմիցս հետաձգվել էր:

Իսկ ամռանը Երևանի կենդանաբանական այգին ավելի մաքուր և բարեկարգ տեսքով ներկայացավ փոքրիկներին ու բոլոր կենդանասերներին:

Նոր ուսումնական տարում էլ սեպտեմբերին «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը՝ շնորհիվ «Միմոնյան» կրթական հիմնադրամի և Հայկական բարեգործական ընդհանուր միության համագործակցության, իր դռները բացեց նաև Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտում: Այս տարի ավելի վաղ «Թումոյի» մեկ այլ մասնաճյուղ բացվեց նաև Գյումրում:

Մշակույթը և արվեստը 2015-ին. Քարոզչայանների այցելությունը, SOAD-ի համերգը, Արմենյիկի տիտղոսը



Փոտոլուր

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը նշող 2015 թվականին մշակույթային կյանքը ևս ընդգծվեց այդ միջոցառումներով:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում տարեսկզբին՝ հունվարի 29-ին, Երևանի Կոմիտասի անվան զբոսայգում բացվեց հայ երաժշտական մշակույթի երախտավորներից մեկի՝ Կոմիտասի թանգարան-ինստիտուտը, որի կառուցման որոշումը կայացվել էր 2013-ի մայիսի 30-ին՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստում՝ ՀՀ նախագահի առաջարկի հիման վրա:

Արդեն տարեսկզբին հայտնի դարձավ, որ տարվա ամենասպասված միջազգային միջոցառմանը՝ «Եվրատեսիլին» Հայաստանը կներկայացնի աշխարհի բոլոր հինգ մայրցամաքներից (Եվրոպա, Աֆրիկա, Ասիա, Ամերիկա, Ավստրալիա), ինչպես նաև Հայաստանից հայ փոփ երաժիշտներից կազմված խումբը՝ խորհրդանշելով ցեղասպանությունից հետո աշխարհասփյուռ հայերի վերամիավորումը:

Genealogy խումբը խաղաղության, միասնության և հանդուրժողականության ուղերձ պարունակող Face The Shadow («Առերեսվիր սովերին») երգով մայիսի 19-23-ը Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում կայացած մրցույթում զբաղեցրեց 16-րդ տեղը:

Իսկ արդեն տարեվերջին՝ նոյեմբերի 21-ին, Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում կայացած «Մանկական եվրատեսիլ-2015»-ում Հայաստանը ներկայացնող 12-ամյա Միքայել Վարոսյանը (Միկա) իր ռոքնռոլ ոճի «Սեր» երգով

զբաղեցրեց երկրորդ հորիզոնականը:

Տարվա ամենասպասված այցերից էր թերևս աշխարհահռչակ Քարդաշյան քույրերի Հայաստան գալը: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ ապրիլի 8-ին արմատներով հայ ամերիկյան հեռուստաստոր Քիմ Քարդաշյանը Հայաստան եկավ ամուսնու, դստեր և քրոջ հետ: Նրանց այցն ամբողջ աշխարհի ուշադրության կենտրոնում էր՝ հերթական անգամ հիշատակելով Ցեղասպանության հարցը:

Իսկ Քիմ Քարդաշյանի ամուսնու՝ աշխարհահռչակ ռեփեր, «Գրեմմի» մրցանակակիր Քանյե Ուեսթի երևանյան անակնկալ անվճար համերգը, որի ժամանակ նա ցատկեց Կարապի լճի մեջ և շարունակեց այնտեղ երգել, ցնցեց ոչ միայն Երևանը, այլև ամբողջ համացանցը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախօրեին՝ ապրիլի 23-ին, Երևանը ողորդվեց աշխարհահռչակ System of a Down ռոք խմբի հնչյուններով, որոնց բացօթյա համերգին մասնակցելու համար Հայաստան էին ժամանել նույնիսկ հարևան երկրներից: Հատկանշական էր նաև համերգի ավարտին խմբի լիբանանահայ ամերիկայաբնակ երգիչ Մերժ Թանկյանի ելույթը, որում նա դատապարտեց ինչպես Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը, այնպես էլ ԱՄՆ-ի կառավարության «սարսափելի» դիրքորոշումը, որը չի որակում զանգվածային սպանություններն ու տեղահանությունները որպես ցեղասպանություն:

Թանկյանը հանդես եկավ նաև քննադատությամբ Հայաստանի քաղաքական իշխանության հասցեին՝ ասելով, որ այն, ի վերջո, պետք է սկսի երկրում «ազատվել ինստիտուցիոնալ անարդարությունից»:

Մայիսի 6-ին Վենետիկի 56-րդ բիենալեի շրջանակներում Մուրթ Ղազար կղզում բացվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Հայություն» անվանումը կրող հայկական տաղավարը, որը շահեց «Ոսկե առյուծ» մրցանակ:

Հուլիսին արդեն 12-րդ անգամ մայրաքաղաք Երևանում անցկացվեց «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը, որի շրջանակներում «Մենք կանք» մրցութային անվանակարգում ներկայացվեցին Հայոց ցեղասպանությանն առնչվող ֆիլմեր, իսկ «Այլևս երբեք» անվանակարգում՝ աշխարհում տեղի ունեցած ցեղասպանությունների մասին պատմող գործեր:

Այս տարի փառատոնի ֆավորիտները իտալացի և գերմանացի դերասանուհիներ Օռնելա Մուտին և Նաստասյա Կինսկին էին:

Բացի այս միջոցառումներից, հայաստանյան մշակութային այս տարին լեցուն էր նաև մի շարք ցուցահանդեսներով, փառատոններով, համերգներով, թատերական ներկայացումների պրեմիերաներով:

Մշակութային գերհագեցած տարին, սակայն, գերծ չմնաց նաև քննադատություններից: Մասնավորապես, երբ Հայաստանի անկախության 24-րդ տարեդարձի կապակցությամբ երգարվեստի բնագավառում ունեցած վաստակի համար Միացյալ Նահանգներում բնակվող 35-ամյա հայ երգիչ Արմեն Գոնդրայանին, ով առավել հայտնի է Արմենչիկ բեմական անունով, շնորհիվեց ՀՀ վաստակավոր

արտիստի պատվավոր կոչումը, հայաստանաբնակներից շատերը զարմացան, զայրացան ու քննադատեցին այս որոշումը:

Հայաստանի մարզաշխարհը 2015 թ. հիասթափություն ֆուտբոլում, հույսեր շախմատում, մասնակցություն Բաքվի խաղերին



Ֆուտբոլ

Հայ մարզաշխարհի՝ անցնող տարվա գլխավոր հիասթափությունը թերևս ֆուտբոլում էր. Հայաստանի հավաքականը, որը ՖԻՖԱ-ի դասակարգման աղյուսակում 2015 թվականի սկզբին 79-րդ հորիզոնականում էր, տարին եզրափակեց՝ 200 երկրների շարքում հանգրվանելով 123-րդ տեղում: Նման արդյունքն արտացոլում է Հայաստանի ընտրանու վատ մրցելույթները և, հետևապես, ձախողված հերթական միջազգային մրցաշարը:

8 խաղում վաստակելով ընդամենը 2 միավոր՝ Հայաստանն անփառունակ ավարտեց իր ելույթները «Եվրո-2016»-ի ընտրական մրցաշարում: Հավաքականին չօգնեց մրցաշարի կեսին գլխավոր մարզիչ, շվեյցարացի մասնագետ Բեռնար Շալանդին՝ նախկին ֆուտբոլիստ, Հայաստանի հավաքականի նախկին ավագ Սարգիս Հովսեփյանով՝ ժամանակավոր պաշտոնակատար կարգավիճակով փոխարինելը: Չօգնեց նաև դարպասապահ Ռոման Բերեզովսկու՝ ֆուտբոլից հեռանալուց հետո հավաքականի մշտական ավագի դերը ստանձնած Դորստմունդի «Բորուսիայի» կազմում փայլուն հանդես եկող Հենրիխ Մխիթարյանի ներկայությունը խաղադաշտում ու առանձին դրվագներում համաշխարհային բարձր մակարդակի ֆուտբոլի ցուցադրությունը:

Ազգային ընտրանու երկրպագուներ հանդիսացող «Առաջին հայկական ճակատ» ակումբի անդամները նույնմեթոդով մի քանի բողոքի ակցիաներ անցկացրին՝ պահանջելով Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի (ՀՖՖ) նախագահ Ռուբեն Հայրապետյանի հրաժարականը: Նրանք մեղադրում էին ՀՖՖ ղեկավարին ազգային հավաքականի անհաջողությունների, ինչպես նաև հայկական ֆուտբոլում տիրող ընդհանուր իրավիճակի համար: Հայրապետյանը, սակայն, հրաժարվեց հրաժարական տալուց, միաժամանակ խոստանալով նախ կարգուկանոն հաստատել երկրի ֆուտբոլային գործերում ու հետո միայն մտածել պաշտոնից հեռանալու մասին:

Դեկտեմբերին հայտնի դարձավ, որ Հայաստանի հավաքականը 2000-2001 թվականին արդեն գլխավորած Վարուժան Մուքիսայանը նշանակվել է ազգային ընտրանու

գլխավոր մարզիչ:

Մինչ 2015-ի ընթացքում հայ ֆուտբոլիստներին չէր հաջողվում խաղադաշտում հաջողություններ արձանագրել, հայ մարզասերներն հաջողությունների ակնկալիքով հայաքն ուղղեցին շախմատի վարպետների կողմը:

Չնայած Հայաստանի թիվ մեկ գրոսմայստեր Լևոն Արոնյանի՝ ՖԻԴԵ-ի վարկանիշային աղյուսակում ելևէջումներին, տարեվերջին հայտնի դարձավ, որ նա, այնուամենայնիվ, կմասնակցի զարնանը սպասվող թեկնածուների մրցաշարին, որը կորոշի աշխարհի գործող չեմպիոն, նորվեգացի Մագնուս Կարլսենին՝ շախմատի թագի համար մարտահրավեր նետող շախմատիստին: Արոնյանին՝ որպես ութերորդ մասնակցի, հրավիրել է հավակնորդների մրցաշարի կազմակերպիչ հանդիսացող ռուսական կողմը:

Տարվա ընթացքում Արոնյանը հաղթեց Սենթ Լուիսի հեղինակավոր մրցաշարում (Grand Chess Tour-ում ընդհանուր հաշվով զբաղեցնելով 3-րդ հորիզոնականը), իսկ Հայաստանի հավաքականի հետ նաև նվաճեց Իսլանդիայի մայրաքաղաք Ռեյկյավիկում կայացած շախմատի Եվրոպայի թիմային առաջնության արծաթե մեդալը:

Տարվա ամենավիճահարույց մարզական իրադարձությունը հայ մարզիկների մասնակցությունն էր Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում անցկացված առաջին Եվրոպական խաղերին: Մի քանի ամիս քննարկումներից հետո Ազգային օլիմպիական կոմիտեն վերջնական որոշումը թողեց ֆեդերացիաների ու մարզիկների հայեցողությանը՝ ցանկանալով են նրանք մեկնել մի երկիր, որ թշնամաբար է վերաբերվում հայերին:

Որոշ առաջատար մարզիկներ, այդ թվում՝ աշխարհի ըմբշամարտի չեմպիոններ Արսեն Չուլֆալայանն ու Արթուր Ալեքսանյանը, հրաժարվեցին խաղերին մասնակցելուց: Բայց, ի վերջո, վեց մարզաձև ներկայացնող 25 մարզիկներից բաղկացած Հայաստանի պատվիրակությունը հունիսին մեկնեց Բաքու, որտեղ խաղերի բացման արարողությանը, ինչպես և սպասվում էր, արժանացավ տրիբունաների թշնամական ընդունելությանը:

Մարզադաշտերի ու մարզադահլիճների ճնշումը ուղեկցեց հայ մարզիկներին խաղերի ողջ ընթացքում: Այդուհանդերձ, Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբիշ Միհրան Հարությունյանը կարողացավ նվաճել արծաթե մեդալ, իսկ Ռուսաստանը ներկայացնող հայազգի ըմբշամարտիկ Ստեփան Մարյանյանը իր քաշային կարգում դարձավ Եվրոպական խաղերի հաղթող:

(Ի դեպ, մարզական լրագրողների կողմից տարվա լավագույն ճանաչված 10 մարզիկների ցուցակում Միհրան Հարությունյանը ճանաչվել է երկրորդը, իսկ որպես 2015 թվականի լավագույն մարզիկ երկրորդ անգամ անընդմեջ ճանաչվեց տարվա ընթացքում աշխարհի չեմպիոնի իր երկրորդ տիտղոսը նվաճած հունահռոմեական ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանյանը):

Իսկ 2015-ի օգոստոսին Հայաստանում անցկացվեցին 6-րդ համահայկական հաղերը: Ավելի քան 6300 հայ մարզիկներ Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից և աշխարհի

հայաշատ համայնքներից մասնակցեցին 17 մարզաձևերում անցկացված մրցումներին:

«Ժամանակ». Մոսկվան կարող է վերանայել Կարսի պայմանագիրը. Թուրքիան կփորձի օկուպացնել Նախիջևանը



«Ժամանակ» թերթը գրուցել է ռուս պատմաբան և քաղաքագետ, Մոսկվայի Արևելքի հարցերով փորձագետ Ստանիսլավ Տարասովի հետ:

Պարոն Տարասով, թուրքական օդուժի կողմից ռուսական «Մու-24» օդանավի կործանումը առաջացրեց բուն աշխարհաքաղաքական զարգացումներ: Ձեր կարծիքով՝ որքանով է սա փոխում իրադրությունը տարածաշրջանում և ինչպե՞ս կազդի Հայաստանի վրա՝ այն իմաստով, որ Հայաստանը Ռուսաստանի դաշնակիցն է:

Իրավիճակն իսկապես փոխվում է, փյուզվում է Ադրբեջանի դաշինքը Թուրքիայի հետ, և Թուրքիայի դիրքերը կտրուկ թուլանում են տարածաշրջանում: Առաջինը՝ եթե նախկինում մենք շատ զգույշ էինք մոտենում Հայաստանին, Ղարաբաղին, չէինք ուզում փչացնել հարաբերությունները մյուս երկրների հետ, ինչ-որ ձևով փորձում էինք հավասարակշռել, հիմա հասկանում ենք, որ Հայաստանը տարածաշրջանում Ռուսաստանի միակ դաշնակիցն է, և Հայաստանը՝ ներառյալ Ղարաբաղը, շատ լուրջ աջակցություն է ստանում իր պաշտպանությունը ամրապնդելու համար: Իսկ Ադրբեջանի դիրքերը կտրուկ թուլանում են:

Երկրորդը՝ այսօր շատ են քննարկում այն հարցը, թե Թուրքիան սադրանքների է դիմելու Հայաստանի սահմանին: Պետք է ասեմ, որ Թուրքիան ի վիճակի չէ դա անելու, քանի որ ներկայումս Թուրքիայի ողջ բանակը ՆԱՏՕ-ի հրամանով հսկում է թուրք-սիրիական սահմանը, իսկ Թուրքիայի Հայաստանի հետ սահմանակցող արևելյան շրջաններում թուրքական բանակի ներկայությունը խիստ թուլացել է՝ քուրդ զինյալների հետ բոլոր մարտերը պարտվելու պատճառով: Տվյալ պարագայում եթե այնտեղ հանկարծ որեւէ սպառնալիք առաջանա, ռուսական ռազմական խմբավորումը Հայաստանում, բնականաբար, կուժեղացվի, և ռուսական զորքերը հայկական բանակի հետ կկանգնեն սահմանին: Հայ ժողովուրդը չպետք է անհանգստանա:

Հատկանշական է, որ նախորդ շաբաթ Թուրքիայի արտգործնախարար Մեյվան Չավուշօղլուն գնաց Բաքու և հանդիպեց Ադրբեջանի նախագահի ու արտգործնախարարի հետ, և ռուսական մամուլում կարծիքներ հնչեցին, թե Թուրքիան կարող է

Աղբրեջանին հրահրել սաղարանքների Հայաստանի դեմ: Ինչպե՞ս կմեկնաբանեք սա:

Մենք գիտենք, որ դեկտեմբերի 3-ին Բաքու կայցելի նաև վարչապետ Դավիթ Ռոբինսոնը: Սա կլինի նրա առաջին պաշտոնական այցը Թուրքիայի կառավարության կազմը հաստատելուց հետո: Նրանք կորցնում են Աղբրեջանը: Գիտեք, Չավուշոյուն Բաքվում Աղբրեջանի արտագործնախարարի հետ գրույցում ասել է, որ իրենք կաջակցեն Աղբրեջանին «օկուպացված տարածքները ազատագրելու հարցում», ինչին ի պատասխան՝ Մամեդյարովն ասել է, թե «մեզ մոտ էլ Լավրովի ծրագրի նախագիծը կա», թեև իրականում Լավրովի ծրագիր պարզապես գոյություն չունի: Կրկնում եմ Հայաստանի եւ Ղարաբաղի անվտանգության միջոցները շարունակվելու են ամրապնդվել, որովհետև այս իրադարձություններն, ըստ երևույթին, երկար են շարունակվելու, եւ Ռուսաստանը կշարունակի ամրապնդել իր դիրքերը Անդրկովկասում: Իսկ այստեղ Հայաստանից բացի ուրիշ դաշնակից չկա:

Դուք ասացիք, որ Թուրքիան կորցնում է Աղբրեջանը: Նկատի ունեք, որ Աղբրեջանը Ռուսաստանի եւ Թուրքիայի կոնֆլիկտում կանցնի Ռուսաստանի՞ կողմը: Այո, նա ուրիշ էլ չունի. նա սեղմված է Ռուսաստանի եւ Իրանի միջև: Եթե նրանք այլ կերպ իրենց պահեն՝ թուրքի պես, այնպես, ինչպես իրեն պահեց Էրդոհանը, Աղբրեջանին պարզապես կհռչոտեն:

Դիվանագիտական-քաղաքական հարթության վրա ռուսական կողմը սկսել է ակտիվորեն օգտագործել հայկական գործոնը Թուրքիայի դեմ: Այս իմաստով Թուրքիան կարո՞ղ է «ձիով քայլ» անել, օրինակ՝ վերսկսել թուրք-հայկական հաշտեցման գործընթացը:

Տեսեք, թե որն է խնդիրը. Հայաստանը, նախ, անկախ եւ ինքնուրույն պետություն է, երկրորդը՝ ՀԱԳԿ-ի, իսկ երրորդը՝ Եվրասիական միության անդամ է: Հայաստանի եւ Թուրքիայի սահմանը նաև Եվրամիության, Եվրասիական միության եւ ՀԱԳԿ-ի սահմանն է: Հասկանո՞ւմ եք: Այո, թուրքերը կարող են խաղարկել հայկական խաղաքարտը, հայտարարել՝ եկեք հաշտվենք, ստորագրենք, օրինակ, Ցյուրիխյան արձանագրությունները: Հայաստանը կարող է գնալ դրան, բայց կրկին հաշվի առնելով իր դաշնակիցների շահերը: Ես գրեթե 100 տոկոսով համոզված եմ, որ ինչ էլ հիմա թուրքերը առաջարկեն, հայերին դա ձեռնառու չէ, եւ նրանք չեն համաձայնվի:

Ընդհակառակը՝ Հայաստանի համար բացվում են նոր աշխարհաքաղաքական հեռանկարներ, որովհետև եթե իրականացվի ամերիկացիների քրդական նախագիծը, Հայաստանն այլևս կսահմանակցի ոչ թե Թուրքիային, այլ Քրդական պետությանը: Այստեղ միայն Հայաստանի խնդիրը չէ: Կարող է սկսվել Թուրքիայի փլուզման գործընթացը: Թուրքիայի տարածքային ամբողջականության միակ երաշխավորը Պուտինն էր: Նա վստահում էր Էրդոհանին, եւ վերջինս համարձակ էր գործում: Այժմ Էրդոհանն այդ վստահությունը կորցրել է, եւ եթե Թուրքիան սկսեն պառակտել, Ռուսաստանը ձայն չի հանի: Աշխարհաքաղաքական փոփոխությունները սկսվելու դեպքում կփոխվի Թուրքիայի հետ սահմանային ռեժիմը: Իր ուժը կարող են կորցնել Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերը, եւ առաջ կգա Նախիջեւանի խնդիրը: Համենայնդեպ, հիմա շատ փորձագետներ կարծում են, որ Թուրքիան կփորձի օկուպացնել Նախիջեւանը, ոչ թե ճնշում գործադրել Հայաստանի վրա: Ինդիյրն այն է, որ Նախիջեւանը սահմանակից է Իրանին, որը Ռուսաստանի դաշնակիցն է եւ թույլ չի տա Թուրքիային այդ քայլն անել: Իսկ Հայաստանի տարածաշրջանային եւ գլոբալ դիրքերը այժմ օբյեկտիվորեն սկսել են ամրապնդվել»:

Իրաքը ձեռք կներկրի Հայաստանից Թուրքիայի փոխարեն



Իրաքը պլանավորում է կրճատել Թուրքիայից ներկրվող ձեռքի ծավալները երկու երկրների միջև ստեղծված քաղաքական լարվածության պատճառով: Այս մասին հաղորդում է Reuters գործակալությունը՝ հղում անելով երկրի առևտրի նախարարության պաշտոնյային:

«Ծրագրում ենք թուրքական ձեռքը փոխարինել տեղական արտադրության եւ այլ երկրներից ներմուծված ձեռքով», - ասել է պաշտոնյան՝ չնշելով այդ քայլի պատճառը:

Միաժամանակ Բաղդադում գործող «Ալ Բահինա ալ Չադիդա» թերթը գրել է, որ սրանով Իրաքն իր դժգոհությունն է հայտնում թուրքական գործերը Հյուսիսային Իրաքում տեղակայելու դեմ: Աղբյուրը նշում է նաև, որ Իրաքում Հայաստանի դեսպան Կարեն Գրիգորյանի հետ հանդիպմանը նախորդ շաբաթ Իրաքի առևտրի նախարար Մոհամեդ Շիա ալ-Մուդանին քննարկել է թուրքական ձեռքի փոխարեն Հայաստանից ձեռք ներկրելու հնարավորությունը

2015թ. Հայաստան ավելի քիչ զբոսաշրջիկներ են ժամանել Ռուսաստանից, ավելի շատ՝ Իրանից



2015թ. սկզբից Ռուսաստանից ավելի քիչ զբոսաշրջիկներ են ժամանել Հայաստան: Այս մասին դեկտեմբերի 25-ին լրագրողներին ասել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության վարչության պետ Մելիսա Ապրեսյանը:

2015թ. առաջին 3 եռամսյակների ընթացքում ՌԴ-ից զբոսաշրջիկների հոսքը պակասել է 9 տոկոսով: Այդ անկումը բավական շոշափելի է եղել, քանի որ Հայաստանում զբոսաշրջության 45 տոկոսը բաժին է ընկնում Ռուսաստանին:

Նա հիշեցրել է, որ ՌԴ-ից ներգնա տուրիզմը կրճատվել է նաև ընդհանուր առմամբ, իսկ 6 ամսվա հաշվարկով՝ 33-34 տոկոսով, այսինքն՝ դեպի Հայաստան ճանապարհորդությունների թվի անկումը համեմատաբար մեծ չի եղել:

Ավելի քան 20 տոկոսով աճել է տուրիստների հոսքը Իրանից, մեծացել է Իրաքից, ԱՄՆ-ից եւ մի շարք եվրոպական երկրներից ժամանած զբոսաշրջիկների թիվը: 2015թ. առաջին 9 ամիսների ընթացքում Հայաստան է այցելել 932 587 մարդ կամ 0.9 տոկոսով ավելի քիչ, քան 2014թ. նույն ժամանակահատվածում:

Հիմնականում անկումը պայմանավորված է ռուսական գործոնով, սակայն այն մեծ չի եղել: Վերջին անգամ նման անկում գրանցվել էր 2012թ. իրանական ռիալի փոխարժեքի անկման պատճառով: «Վերջին մի քանի տարիների ընթացքում մենք անկումներ չեն ունեցել», - ասել է Ապրեսյանը:

Բազալտե մանրաթելերի եւ փրպաեռլիտի արտադրությունը կարելու է ՀՀ էներգաարդյունավետության համար. Նախարար



Բազալտե մանրաթելերից եւ փրպաեռլիտից նորարական նյութերի արտադրությունը կարելու է Հայաստանի էներգաարդյունավետության համար: Այս մասին ղեկտեմբերի 25-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ ասել է քաղաքաշինության նախարար Նարեկ Սազյանը՝ ամփոփելով 2015թ. արդյունքները:

Նախարարությունը պատրաստվում է մետաղական ամրանի փոխարեն բազալտե ամրանների համար չափանիշներ մշակել: Այդպիսով՝ ներկրվող մետաղական ամրանները հնարավոր է փոխարինել տեղականով: Բացի այդ, բազալտե տարրերը շատ թեթեւ են եւ բարձրացնում են կարծրությունը: Սակայն սկզբի համար այդ հատկությունները պետք է կիրառել գործնականում: Այդ պատճառով նախարարությունը թույլատրել է դրանք օգտագործել ցածր սեյսմիկ ռիսկի գոտում կառուցվող փոքր տների եւ շինարարական ճանապարհների համար: Դրանից հետո նրանց համար նորմատիվներ կմշակվեն:

Պատասխանելով այն հարցին, թե հանդիպումներ անցկացվել են արդյոք «Արագած Պեռլիտ» խոշոր գործարանի հեփալանատերերի հետ, Սազյանը նշեց. «Պեռլիտը բացառիկ հնարավորություններ ունի: Դա այն ռեսուրսներից մեկն է, որով Հայաստանը կարող է միջազգային շուկա դուրս գալ: Այդ ծրագիրը նույնպես մեր ուշադրության կենտրոնում է»:

Նախարար. 88-ի Սպիտակի երկրաշարժից տուժածներին ամբողջությամբ կվերաբնակեցնեն 2017-ին

1988-ի Սպիտակի երկրաշարժից տուժածներին ամբողջությամբ կվերաբնակեցնեն 2017-ին: Այդ մասին ղեկտեմբերի 25-ի մամուլի ասուլիսին լրագրողներին հայտնել է քաղաքաշինության նախարար Նարեկ Սազյանը՝ ամփոփելով 2015 թվականը:

Գյումրի քաղաքում ծրագրի վերջին փուլում բնակարարածքի հերթում մոտ 450 ընտանիք էր մնացել: Նրանցից 230-ը բնակարան գնելու հավաստագիր է ստացել: Եվս 220-ը ներառվել է երկրորդ փուլում:



Գյումրիի հատկացումներ են նախատեսված նաև Ծիրակի, Լոռու եւ Արագածոտնի մարզերում այլ տուժած տարածքների համար, հավելել է նախարարը:

2008-ին հերթում 5 363 ընտանիք էր մնացել, նրանցից 4 398-ի կամ 82 տոկոսի բնակարանային հարցը լուծված է: Մնացած 635 ընտանիքը 2016-17-ին բնակարան կստանան կամ գնման հավաստագիր:

Բացի այդ, 2016-ին Գյումրիից ոչ հեռու Ախուրյան գյուղում 3 բազմաբնակարանային շենք կամրացվի, որտեղ 104 ընտանիք է ապրում: Եվս 33 ընտանիք 4-րդ շենքից բնակարանի գնման հավաստագիր կստանա: «Այդ աշխատանքները ցանկանում ենք ավարտել ոչ միայն մինչև տարեվերջ, այլև՝ մինչև աշուն», - հավելել է նախարարը:

«Ժամանակ». ՀՅԴ-ն հիմա էլ 3 մարզպետի պաշտոն է ուզում



«Ժամանակ» թերթը գրում է. «ՀՅԴ-ն շարունակում է մտահոգ լինել իր սպազայի հարցում, առջեւում 2017 թվականի խորհրդարանական ընտրություններն են, իսկ ՀՅԴ-ն ԱԺ մտնելու համար ո՛չ վարկանիշ ունի, ո՛չ վարչական ռեսուրս:

Այդ պատճառով էլ, մեր տեղեկություններով, ՀՅԴ-ն երեք նախարարական պորտֆելի փոխարեն երեք մարզպետի պաշտոն է ուզում, որոնք ավելի մեծ վարչական լծակների են տիրապետում եւ ավելի մեծ ազդեցություն ունեն ընտրական պրոցեսի եւ արդյունքների ձեւավորման վրա, քան նախարարները:

Ընդ որում ուզում են մարզպետներ ունենալ առավել խիտ բնակեցված եւ մարզպետերի կողմից առավել վերահսկելի համարվող տարածքներում Գեղարքունիք, Արմավիր եւ Արարատ»:

Երեւանում բացվել է «Աստղիկ» բժշկական կենտրոնը. ներկա է եղել ՀՀ նախագահը



ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն այսօր մայրաքաղաքի Մալաթիա-Մերաստիա վարչական շրջանում ներկա է գտնվել «Աստղիկ» բժշկական կենտրոնի բացման արարողությանը: Հանրապետության նախագահը նորաբաց բժշկական կենտրոնում շրջայցի ժամանակ ծանոթացել է ամողջապահական այդ հաստատության նոր մասնաշենքի հնարավորություններին, ինչպես նաև հին մասնաշենքի հիմնանորոգման ու արդիականացման ուղղությամբ կատարված աշխատանքներին, իրականացված ներդրումներին, բուժհաստատության կողմից մատուցվող ծառայություններին:

«Աստղիկ» բժշկական կենտրոնը, որը 1965թ-ից շահագործվող «Մալաթիա» հիվանդանոցի իրավահաջորդն է, պատասխանատուների հավաստմամբ, արդիականացման արդյունքում հագեցվել է ժամանակակից սարքավորումներով: Բուժման, ախտորոշման եւ նորագույն ծառայությունների ներդրման, բարձրորակ կադրերով համալրման շնորհիվ կենտրոնում բժշկական օգնության եւ սպասարկման ծավալներն աճել են, ինչին գուրախեռ ավելացել է կենտրոնի աշխատողների թվաքանակը:



Մերի-Բավրա ճանապարհը կարելի կլինի անցնել 4,5 ժամում. Սերժ Սարգսյանը «Հյուսիս-Հարավի» առաջին հատվածի բացմանը

Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանն այսօր՝ դեկտեմբերի 29-ին, մեկնել է Արարատի մարզ, որտեղ ներկա է գտնվել «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում ճանապարհի առաջին (տրանշ 1)՝ Երեւան-Արտաշատ նորակառույց հատվածի բացման արարողությանը: Արարողության մասնակիցները նույն վայրում ուղիղ հեռարձակմամբ հետևել են նաև ճանապարհային միջանցքի Երեւան-Աշտարակ հատվածի գուրախեռ բացման արարողությանը:

Նախագահի մամուլի գրասենյակից մեր աղբյուրին հայտնում են, որ «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքի ենթակառուցվածքային խոշոր ներդրումային ծրագիրը նպատակ ունի միջազգային բարձր չափանիշներին բավարարող 556 կմ ընդհանուր երկարությամբ Մերի-Երեւան-Բավրա ավտոճանապարհի միջոցով հանրապետության հարավային եւ հյուսիսային սահմանները կապել միմյանց հետ՝ կրճատելով ճանապարհի երկարությունը շուրջ 85 կմ-ով: Նշված տարածությունն անցնելը տրանսպորտային միջոցների համար ներկայիս 9-9.5 ժամից կնվազի մինչև 4.5 ժամ: Ծրագրի իրագործման արդյունքում կբարձրանա երթուևեկության հարմարավետությունն ու անվտանգությունը՝ ապահովելով նաև արելեյից արեւմուտք իրականացվող տրանսպորտային շարժի եւ բեռնափոխադրումների տարանցիկ ճանապարհի դառնալու նպատակի իրագործումը, միաժամանակ, զարգացման լուրջ հնարավորություններ ընձեռելով Հայաստանի հարավից հյուսիս ընկած բնակավայրերին:

Հանրապետության համար ռազմավարական նշանակության կարևոր այդ ճանապարհի՝ երկկողմանի երթուևեկությամբ առաջին հատվածի բացումից հետո, ծրագրի պատասխանատուները նախագահին զեկուցել են «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքի կառուցման ծրագրի ընթացքի եւ առաջիկա զարգացումների մասին:

Արևմտյան Հայաստան

Արմաշի հայերը մեր հարևաններն էին. նոր գիրք Թուրքիայում



Օմեր Աբրևի առաջին վեպը՝ «Թուրքիո լեռը», այսօրվա Աքմեդեի՝ նախկին Արմաշի հայերի մասին է: Վեպի անունը Արմաշի շրջակայքում գտնվող լեռան անունով է, այն ներկայացնում է հայերի՝ 1914-1915 թթ. կյանքից մի հատված: Օմեր Աբրևն, ով նախկինում համալսարանային նախագահ է եղել,

վեպում ուսումնասիրում է այնտեղ ծնված ու մեծացած Արմաշի հայերի պատմությունն ու մշակութային ժառանգությունը:

Akumq.net-ի թարգմանությամբ ներկայացնում ենք «Ակոս»-ի հարցազրույցը Օմեր Աքրնի հետ

-Նախ սկսենք Ձեզանից, ո՞վ է Օմեր Աքրնը:

-Ծնվել եմ 1951 թ. Արմաշում, որն այսօր կոչվում է Աքմեշե: Բնակչության փոխանակման հետևանքով Բայկաններից եկած գաղթականի թոռ եմ: Թուրքիայի և Հունաստանի միջև կնքված «Բնակչության փոխանակման» մասին պայմանագրի արդյունքում 1924 թ. մորս ընտանիքը Դրամայից, հորս ընտանիքն էլ Իսթեյեից (Քսանտի) գաղթել է Թուրքիա: 100 տարի առաջ պապերս ապրում էին Դրամայում և Իսթեյեում: Անգամ մտքի ծայրով չէին կարող անցկացնել, թե մի օր կհեռանան իրենց հողերից: Ծիշտ այնպես, ինչպես այս հողերում ապրող վարդաններն ու անահիտները: Մտածում էին, որ իրենց ապրած հողերը կլքեն միայն այն ժամանակ, երբ երկիրը կանգ առնի:

-Ձեր հայրն այստե՞ղ է ծնվել:

-Հայրս Իսթեյեից Արմաշ եկած քարավանի՝ առաջին ծնված երեխան է եղել: Մենք էլ որպես աքմեշեցի ծնվեցինք:

-Ինչպե՞ս իմացաք, որ Աքմեշեն նախկինում հայկական բնակավայր է եղել:

-20 տարեկան հասակում մեր մեծերի գրույցից իմացա, որ Աքմեշեն հայկական բնակավայր է եղել, անունն էլ Արմաշ է: Ամեն անգամ, երբ սկսում էին պատմել, թե ինչպես է բնակչության փոխանակում կատարվել, խոսքը հասնում էր նաև նրան, որ Աքմեշեն հայկական գյուղ է եղել: Սկսեցի հետաքրքրվել, թե հայերն այստեղ ինչպե՞ս էին ապրում, ի՞նչ էին ուտում, ի՞նչ էին խմում: Այդ ժամանակներից մնացած ջրաղացն ու տպարանը թեև ավերակների վերածված, սակայն կանգուն էին և վկայում էին նրանց պատմության մասին: Երկար տարիներ գործած Ըշրք աղբյուրն էլ այսօր շարունակում է իր գոյությունը որպես ջրամբար:

-Ձեր մեծերը ի՞նչ էին պատմում Արմաշում ապրած հայերի մասին:

-Ամեն անգամ, երբ սկսում էին պատմել, թե ինչպես է բնակչության փոխանակում կատարվել, խոսքը հասնում էր նաև Արմաշի հայկական գյուղ լինելուն: Տաստ ստում էր. «Իսթեյեում շատ գեղեցիկ տուն էինք կառուցել: Այդ գեղեցիկ տունն այդպես էլ թողեցինք-եկանք: Գալուց մտածում էինք, թե այստեղ, ով իմանա, ի՞նչ գեղեցիկ տներ են մեզ սպասում: Սակայն վրաններում հայտնվեցինք»: Երբ եկել են Աքմեշե, տուն մնացած չի եղել այստեղ: Պատկերացնում էք՝ 1915 թ. պաշտոնապես 1 505 հոգի բնակչություն ունեցող Արմաշում 1924 թ. բնակելի մի տուն անգամ չի մնացել: Դրա փոխարեն բազմաթիվ ավերակներ են մնացել, որոնք վկայել են, որ այստեղ նախկինում բնակավայր է եղել: Օրինակ՝ տպարան, ջրաղաց... Անգամ մինչև վերջերս տպարանի երկրորդ հարկում հարսանիք, նշանդրեք էին անում: Ահա այս ամենը 20 տարեկան հասակում ինձ ստիպեց մտածել՝ «Եթե այստեղ նախկինում հայերն են ապրել, ապա ինչու՞ ենք այսօր մենք բնակվում»:

-Գիրք գրելու արկածախնդրությունն է՞լ այդպես սկսվեց:

-Իզմիթի Այդիի արվեստի միությունում, «Մտեղծագործ գրող» դասընթացի շրջանակում, «Ձյունը և մոմի բույրը» վերնագրով մի պատմվածք գրեցի, որտեղ պատմեցի Արմաշի մտակայքում գտնվող Շերաավեր Մուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու մասին: Դասընթացին հաճախող ընկերներիցս մեկն ասաց, որ իր պապիկը հայ է, և շատ է ազդվել իմ պատմվածքից: Խոսեցինք այն մասին, որ դա կարող է վերածվել վեպի: Այդ ընկերոջս քաջալերանքի արդյունքում որոշեցի Արմաշի վերաբերյալ մի վեպ գրել: Արմաշի և Իզմիթի շրջակայքում բնակված հայերի մասին ուսումնասիրություններս ընդարձակեցի: Այդ ընթացքում

կարդացի, թե 1915 թ. Արմաշի և Իզմիթի շրջակայքում բնակվող հայերն ինչպես են տեղահանության ենթարկվել: Այս ամենի մասին նաև վեպում գրեցի: Թեև վեպը հորինված է, սակայն պատմական փաստերի վրա է հիմնված: Վեպում տեղահանության մասին գրելիս օգտվել եմ թեմային վերաբերող պատմական գրքերից: Գրել եմ, թե այստեղից գնացածներն ինչպես են գնացել, իսկ վերադարձածներն ինչպես ոչինչ չեն գտել այստեղ:

-Գրքի վերաբերյալ ինչպիսի՞ արձագանքներ եք ստացել:

-Տեղահանության որոշ դրվագներ գրքում արտացոլելու համար Աքմեշեի շրջակայքում բնակվողներից ոմանք վրդովվեցին ինձ վրա: Մինչդեռ այս վեպը մեզանից առաջ այստեղ բնակված հայերի նկատմամբ սիրո պարտքս էր: Թեև միևնույն ժամանակ այստեղ չենք ապրել, իրար չենք ճանաչել, արմաշցի հայերը մեր հարևաններն էին, որովհետև նրանց թողած հողերում հետո մենք սկսեցինք ապրել: Ոչ մի ժողովուրդ, հասարակություն իր ապրած հողերից երգ ու պարով, ծիծաղով չի հեռանում: Հարյուրավոր տարիներ այստեղ բնակված մարդիկ մի առավոտ չեն արթնացել ու ասել՝ «Իե՛հ, գնացինք այստեղից»: Նրանց բռնությամբ ստիպել են լքել այն հողերը, որտեղ հարյուրավոր տարիներ են ապրել:

-Դրական արձագանքներ է՞լ եք ստացել:

-Քանի որ նախկինում համբարության նախագահ եմ եղել, Թուրքիայի տարբեր ծայրերից ընկերներ ունեմ: Նրանցից ոմանց ուղարկեցի գիրքս, և դրական արձագանք ստացա: Ադանայից, Մերսինից և ուրիշ վայրերից ընկերներս վեպս կարդացին և շատ գեղեցիկ մեկնաբանություններ արեցին: Դա չափազանց ուրախալի փաստ էր ինձ համար:

-1915 թվականից հարյուր տարի է անցել: Ըստ Ձեզ՝ Թուրքիայի հասարակությունը 1915 թ. հետ առերեսվելու ո՞ր փուլում է:

-Արմաշում կամ Թուրքիայի բազմաթիվ այլ վայրերում 100 տարի առաջ բնակված հայերը հոգս չեն ցնդել: Ես՝ Օմեր Աքրնս, այդ մարդկանց հանդեպ սիրո պարտքից դրդված ցանկացա այս վեպը գրել: Արմաշցի հայերն իմ հարևաններն են: Իրար հետ որևէ բան կիսելու խնդիր չունենք: Ինչ հիմնավորմամբ ուզում է լինի՝ անընդունելի է որևէ հասարակությանը հարյուրավոր տարիներ ապրած հողերից բռնությամբ հեռացնելը: Ազգայնական, խտրական զգացմունքներով մեր գլուխները ավագի մեջ թաղելու փոխարեն ստիպված ենք առերեսվել կատարվածի հետ: Արմաշում հայերի ապրած բոլոր տներն ավերել էք, սակայն ջրաղացն ու տպարանը կանգուն են: Հա՛, մեկ էլ ասում են. «Այստեղից գնալիս հայերն են քանդել այդ տները»: Նման բան ինչպե՞ս եք պատկերացնում: Իմ պապերը Իսթեյեի, Դրամայի իրենց տներն ինչու՞ չքանդեցին: Այսօր արդեն գիտենք, որ այդ տները քանդել են, որ գնացածներն այլևս հետ չվերադառնան: Այս կողմերում Փիրահմեդ կոչված մի վայր կա: Մայրս պատմում էր, որ այնտեղ դաշտ էին մշակում: Մի անգամ անձրևի ժամանակ հողի տակից կոճակներ, թելի կոճեր, կարի պարագաներ են դուրս եկել: Այսինքն՝ եթե անգամ տներն ավիրեք, գետնի տակից որևէ ձևով կյանքի այլ նշաններ կհայտնվեն: Նրանց տները, եկեղեցիները կարող եք ավիրել, սակայն գետնի տակից կյանքի գոյության մասին վկայող մնացորդները շարունակելու են երևան գալ:

-Այսուհետ ևս մտածո՞ւմ եք շարունակել գրել հայերի և Արմաշի մասին:

-Վեպի վերջում գրել եմ՝ Արմաշից գաղթեցվածների գլխով ինչեր են անցել մինչև Փոլաթը կոչված վայր հասնելը: Այժմ շարունակելու եմ գրել՝ պատասխանելով հետևյալ հարցերին. ի՞նչ պատահեց Փոլաթըից հետո, և ինչե՞ր ապրեցին նրանք, ովքեր կարողացան վերադառնալ Արմաշ:

Հատված գրքից

Կետօրին մոտ քարավանը հասել էր Աքյազը: Տարեցները եզանը լծված սայլերով էին շարունակում ճանապարհը: Երիտասարդներն ու նրանք, ովքեր դեռևս ուժասպառ չէին եղել, ոտքով էին առաջ ընթանում: Արդեն ոտքերի ներքանները սկսել էին բացվել: Ճանապարհին իրենցից բացի՝ ոչ ոք չկար: Չինվորները հեռվից էին հսկում քարավանը: Նրանց պարտականությունն էր՝ թույլ չտալ, որպեսզի քարավանից փախչեն: Մի քաղցր բարձունք էր սպասվում: Շրջակայքում հատ ու կենտ կաղնու ծառեր էին երևում: Ձիավորների մի խումբ քարավանի առաջը կտրեց: Չինված էին: Քարավանի հետևի մասում գտնվողները պայքարում էին ճանապարհի դժվարությունների հետ, մինչդեռ առջևում գտնվողները նկատել էին: Մինչ փորձում էին հասկանալ իրավիճակը, քարավանի վրա կրակ բացեցին:

1400-ական թթ. արաբների և ժամանակ առ ժամանակ մամլուքների հարձակումներին չկարողանալով դիմադրել՝ Կիլիկիայի Մարաշ քաղաքի 70-80 ընտանիքից բաղկացած հասարակությունը գալիս և բնակություն է հաստատում Արմաշում: Գյուղը, որը կոչվել է շրջակայքում վեր խոյացող Թուրքիթ լեռան անունով, հետագայում կոչվել է Արմաշ, քանի որ բնակեցվածները մարաշցի էին:

Թեև նորաբնակները սկզբնական շրջանում ենթարկվում էին շրջակա գյուղերի հարձակումներին և ստիպված էին պայքարել բնական երևույթների դեմ, սակայն որոշ ժամանակ անց կարողացան առաջատար կենտրոն դառնալ սոցիալական, կրթական և կրոնական ասպարեզում: Այդ տարիներին փայտից կառուցված Սուրբ Աստվածածնի սրբապատկերի շնորհիվ եկեղեցու կարևորությունը մեծանում է:

1611 թ. կառուցված Արմաշի վանքին կից տպարանը գործադրվում է 1964 թ.: Տպագրված նյութերի տարածումը թափ էր հաղորդում կրթական գործին: 1889 թ. բացվում է հոգևոր դպրոց:

1915 թ. տեղահանության մասին օրենքով գյուղը դատարկվում է: Այդ տարեթվին գյուղն ուներ 1 505 բնակիչ: Հետ վերադաձածների հետ միասին՝ մի բուռ մնացած հայերն իրենց գոյությունը կարողանում են շարունակել մինչ 1922 թ.:

1922-1924 թթ. գյուղն ամբողջովին ավերվել, քանդվել էր: 1924 թ. Հունաստանից գաղթած գաղթականները եկեղեցու կանգուն մնացած երեք պատերի վրա մզկիթ են կառուցում: 1999 թ. երկրաշարժի հետևանքով փլուզվում են նաև վանքի կանգուն մնացած ավերակները:

Արմաշի հայերից մնացած ջրաղացը, ջրամբարն ու տպարանը դեռևս կանգուն են, չնայած որ ավերակների են վերածված:

Արմաշ, Արմաշա այնուհետև Աքմեշե կոչված բնակավայրում դեռ բնակվում են բնակչության փոխանակության արդյունքում այստեղ հաստատված գաղթականների թոռները:

Կրոնափոխ հայության խնդրի արձարծումը Թուրքիայի տարբեր շրջանակների կողմից

Վերջին տարիներին թուրք պետական գործիչների, ինչպես նաև՝ հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների մեծ մասը կրոնափոխ հայերի խնդրին հիմնականում անդրադարձել է նման հայերի՝ «քրդի և ալևիի դիմակի տակ՝ ահաբեկչական կառույցներում ընդգրկված լինելու և դրանցում ակտիվ դերակատարում ունենալու դիտանկյունից»:

